ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

12 փետրվարի 2024թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանի (այսուհետ՝ «ԵՊՀ ԻՄ»), մի կողմից, և **«ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» հիմնադրամը** (այսուհետ՝ «Հիմնադրամ»), ի դեմս տնօրեն Արթուր Ամիրխանյանի, մյուս կողմից (միասին հիշատակելիս՝ «Կողմեր»), կարևորելով կրթության և համագործակցության միջոցով Դիլիջան քաղաքում զբոսաշրջության ոլորտի զարգացումը,
Հաշվի առնելով, որ Հիմնադրամի նպատակներից է Դիլիջան քաղաքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ համայնքների վերածումը համաշխարհային ճանաչում ունեցող կրթական, տուրիստական կենտրոնի,

կնքեցին սույն Համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ «Հուշագիր») հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հուշագրի առարկան Կողմերի միջև բազմակողմանի համագործակցությունն է «ԳՈԹՈՒԴԻլի» նախագծի (ԳՈԹՈՒԴԻլի-ին այցելավայրերի կառավարման գրասենյակ է, որը զբաղվում է Դիլիջան խոշորացված համայնքի զբոսաշրջային պոտենցիալի խթանմամբ) շրջանակներում:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն համագործակցությամբ Կողմերը նպատակ են հետապնդում նպաստել Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքում զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացմանը՝ կրթության, փորձի փոխանակման և փոխօգնության միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԴԵՐԸ

3.1. **ԵՊՀ ԻՄ-ն սույն Հուշագրի շրջանակում՝**
3.1.1. Հիմնադրամին տրամադրում է ԵՊՀ ԻՄ տարածքը և գույքը համատեղ միջոցառումներ կազմակերպելու համար,
3.1.2. Հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է զբսաշրջության ոլորտի գիտահետազոտական և կրթական նախագծեր,
3.1.3. Հիմնադրամի հետ միասին մշակում է գործնական դասընթացներ ուսանողների համար:
3.2. **Հիմնադրամը սույն Հուշագրի շրջանակում՝**
3.2.1. իր կարողությունների սահմաններում պատրաստակամ է աջակցել ուսանողների մասնագիտական գործնական ուսուցումը կազմակերպելուն, ապահովել անհրաժեշտ պայմաններ (ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման, հմտությունների և կարողությունների ձեռքբերման և զարգացման համար), ԵՊՀ ԻՄ-ի հետ միասին սահմանել գործնական ուսուցման ընթացքում ուսանողի կողմից անցկացվող մասնագիտական պրակտիկայի բովանդակությունը,
3.2.2. պատրաստակամ է հնարավորության դեպքում ԵՊՀ ԻՄ-ին ներգրավելԴիլիջան քաղաքի զբոսաշրջության զարգացման ծրագրերի իրականացմանը ժամանակ ,
3.2.3. պատրաստակամ է զբոսաշրջային արդյունքների մշակման աշխատանքներում ներգրավել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներին (որպես կամավորներ) և պրոֆեսորադասխոսական անձնակազմին՝ ըստ անհրաժեշտության:
3.2.4. պատրաստակամ է ԵՊՀ ԻՄ-ին աջակցել մտավոր ներուժի կարողություններով:
3.3. **ԵՊՀ ԻՄ-ն իրավունք ունի՝**
3.3.1. Հիմնադրամում իրականացնել վերահսկողություն սովորողների մասնագիտական գործնական ուսուցման ընթացքի նկատմամբ,
3.3.2. Հիմնադրամ վերապատրաստման գործուղել մասնագիտական դասընթացների մանկավարժներին՝ ըստ անհրաժեշտության՝ նախապես ստանալով Հիմնադրամի համաձայնությունը,

3.3.3. Հիմնադրամի հետ որոշել ԵՊՀ ԻՄ-ի մասնակցությամբ Դիլիջան քաղաքի համար կարևորություն ունեցող զբոսաշրջային արդյունքների բովանդակությունը:

3.4. **Հիմնադրամն իրավունք ունի՝**

3.4.1. ուսուցման ավարտից հետո սովորողին Հիմնադրամում վճարովի կամ կամավոր աշխատանք առաջարկել,

3.4.2. առաջարկել ԵՊՀ ԻՄ-ի հետ համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացման թեմաներ:

3.5. Կողմերը պարտավորվում են պահպանել միմյանց՝ համագործակցության շրջանակում հայտնի դարձած առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների գաղտնիությունը:

3.6. Կողմերից յուրաքանչյուրը կարող է համագործակցության վերաբերյալ մամլո հաղորդագրություն տարածել կամ հանդես գալ հրապարակային հայտարարություններով մյուս Կողմի համաձայնությամբ:

4. Պարտականության բացառում

4.1. Ոչինչ սույն Հուշագրում չի կարող կազմել կամ մեկնաբանվել որպես Կողմերից մեկի կողմից սույն Հուշագրում նշված կամ դրան համապատասխան որևէ միջոցառում կամ ծրագիր ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորելու առաջարկ, խոստում կամ պարտավորություն: Ցանկացած այդպիսի պարտավորություն պետք է արտացոլված լինի Կողմերի միջև կնքվող համաձայնագրերում:

4.2. Սույն Հուշագրով Կողմերի համար որևէ իրավունքներ և պարտավորություններ չեն սահմանվում, և այն իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ չի համարվում: Դրանով արտահայտված է Կողմերի մտադրությունը հատկորոշել և դյուրացնել համագործակցության ոլորտները և հնարավորությունները:

4.3. Սույն 4-րդ հոդվածում ամրագրված դրույթները չեն տարածվում սույն Հուշագրի 3.6.-րդ կետում ամրագրված Կողմերի պարտավորությունների վրա:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Հուշագրի կնքման և կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահության, ինչպես անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել սույն Հուշագրի նպատակների իրականացումը:

5.2. Սույն Հուշագրի նպատակների իրականացման հետ կապված Կողմերի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները կամ հաստատումները ուղարկվում կամ տեղում կազմվում են գրավոր՝ պատշաճ կերպով և ստորագրվում են լիազորված անձանց կողմից:

5.3. Կողմերը հավաստում են, որ սույն Հուշագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել սույն Հուշագիրը:

5.4. Կողմերը հաստատում են նաև, որ սույն Հուշագրի կնքումը և կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին, ինչպես նաև չի վնասում համբավին:

5.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի փոփոխման դեպքում նրանք պարտավոր են մեկ շաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

5.6. Հուշագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.7. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ: Սույն Հուշագիրը կարող է դադարեցվել՝ այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

5.8. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.9. Բոլոր այն հարցերը, որոնք նախատեսված չեն սույն Հուշագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.10. Սույն Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով և կնքվում է երկու հավասարազոր օրինակից:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
Իջևանի մասնաճյուղ
ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան
Ուսանողական 3
ՀՎՀՀ՝ 01506928
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյան

ստորագրություն
Կ.Տ.

«ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ»
հիմնադրամ
ՀՀ, ք. Դիլիջան, Գետափնյա 7
ՀՎՀՀ՝ 07618624
Տնօրեն՝ Արթուր Ամիրխանյան

ստորագրություն
Կ.Տ.